



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՌՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

---

**ԱՆԴԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Քաղ. Երեւան

11 հուլիսի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի  
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Պողոսյանի  
Անդամակցությամբ՝ Ա. Պետրոսյանի  
Մ. Թոփուլյանի

Ուսումնասիրելով քաղաքացիներ Սվերլանա Կարապետյանի եւ Սուսաննա  
Սփեփանյանի անհապական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

**ՊԱՐՁԵՑ.**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացիներ Սվերլանա Կարապետյանը եւ Սուսաննա Սփեփանյանը 20.06.2013թ. դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված «սեփականափեր» բառի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 18, 19 եւ 31-րդ հոդվածների պահանջներին:

Անհապական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներից պարզվեց, որ դիմումի քննության ընդունումը ենթակա է մերժման՝ հեփելյալ պարճառարանությամբ.

1. Դադարական կազմը գրնում է, որ դիմումն ակնհայր անհիմն է: Դիմողները չեն ներկայացրել անհրաժեշտ եւ իրավական փաստարկներ վիճարկվող իրավադրույթների ենթադրյալ հակասահմանադրականությունը հիմնավորելու համար, իսկ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է, որ անհայրական դիմումը պետք է պարունակի ՀՀ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: ՀՀ սահմանադրական դադարանն իր ՍԴՈ-839 որոշմամբ իրավական դիրքորոշում է արգահայտել «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասի վերաբերյալ՝ ամրագրելով, որ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հարկանիշով:

2. Դադարական կազմը գրնում է նաև, որ դիմողները պարզած չեն հիմնավորել իրենց սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փասփի եւ սահմանադրաբիրավական վեճի առարկա հանդիսացող դրույթների միջև պարճառահետքեւանքային կապի անմիջական առկայությունը, ինչն ըստ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի եւ ՀՀ սահմանադրական դադարանի ՍԴՈ-839 որոշման՝ անհարական դիմումն ակնհայր անհիմն համարելու հիմք է:

3. Միաժամանակ, դադարական կազմը գրնում է, որ դիմողները, ձեւականորեն վիճարկելով վերոհիշյալ նորմերի սահմանադրականությունը, ըստ էության, բարձրացնում են այդ դրույթների կիրառման իրավաչափության հարց: Փաստորեն, դիմողները փորձել են դադարական ակտերի իրավական հետեւանքները վերագրել խնդրո առարկա իրավադրույթների սահմանադրականության խնդրին: ՀՀ սահմանադրական դադարանն իր՝ 2009թ. մարտի 17-ի ՍԴԸՈ-21 որոշմամբ արդահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դադարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դադարանի թիվ 2 դադարական կազմը

## **ՈՐՈՇԵՑ.**

Քաղաքացիներ Սվետլանա Կարապետյանի եւ Սուսաննա Սփեփանյանի անհագության դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

**Նախագահող՝**

**Անդամներ՝**

**11 հուլիսի 2013 թվականի  
ՍԴ-ԿԸ / 2-19**